

**ԿՐԱԿԻ ԵՎ ԱՐԵՎԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԵԿ ԳԻՇԵՐ»
ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵԶ**

*Նաիրա Սահակյան,
արարագիտության մագիստրոս
Սոնա Տոնիկյան,
բ.գ.թ. դոցենտ, ԵՊՀ արարագիտության ամբիոն*

«Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների ժողովածուն արաբական գրականության ամենահայտնի ստեղծագործություններից մեկն է: «Ճանապարհորդների և ոչ մի պատմություն ձեզ Մուսուլմանական Արևելքի բարքերի և հասարակական ու ընտանեկան կյանքի պայմանների մասին չի տա այնքան հստակ, այնքան կենդանի նկարագրություններ, որքան «Հազար ու մեկ գիշեր»-ը»,¹-նշում է Վ. Գ. Բելինսկին¹:

«Հազար ու մեկ գիշեր»-ում առկա է հեքիաթների և պատմությունների երեք հիմնական խումբ՝ հնդիրանական, բաղդադյան և եգիպտական: Կրակի և արևի պաշտամունքը հիմնականում հանդիպում է բաղդադյան շրջանի հեքիաթներում: Այդ հեքիաթներից է «Շահրաման արքայի, նրա որդի Կամար ալ-Չամանի և արքայադուստր Բուդուրի հեքիաթ»-ը, որի մեջ ներառված է «Ալ-Ամջադի և ալ-Ասադի հեքիաթ»-ը, որն էլ իր հերթին ներառում է «Նիմի և Նումի հեքիաթը»:

Գլխավոր պատմությունը բաժանված է երկու մասի: Առաջին մասն, ամենայն հավանականությամբ, հնդիրանական ծագում ունեցող հեքիաթ է: Ողջ պատմության հանգուցակետն այն հատվածն է, ուր պատմվում է Կամար ազ-Չամանի և արքայադուստր Բուդուրի սիրո պատմությունը: Նրանք երկուսն էլ իրենց հայրերի միակ զավակներն են: Եվ՝ արքայազնը, և՛ արքայադուստրը միաժամանակ հրաժարվում են ամուսնանալ՝ չնայած հայրերի պնդումներին, ու վերջիններս նրանց բանտարկում են: Երիտասարտներին գիշերն այցելում են երկու ջին, որոնք, հետո

¹ Белинский В. Г. Полн. собр. соч., т. III. М., 1953, с. 157.

հանդիպելով իրար, պատմում են իրենց տեսած էակի գեղեցկության մասին ու սկսում են վիճել, թե որի սիրելին է ավելի գեղեցիկ: Ի վերջո, որոշում են նրանց իրար կողք դնել ու համեմատել: Ջիները գնում են և արքայադուստր Բուդուրին քնած ժամանակ բերում են Կամար ազ-Չամանի մոտ: Ջիները Կամարին և Բուդուրին հերթով արթնացնում են և թույլ տալիս, որ նրանք իրար տեսնեն: Ապա նորից Բուդուրին տանում են իր երկիր: Երբ երկու սիրահարները՝ Կամարը և Բուդուրը, արթնանում են, տեսնում են, որ մենակ են և այս բաժանումը նրանց համար շատ ծանր է լինում: Երբ պատմում են, որ գիշերը մենակ չեն եղել, նրանց ոչ ոք չի հավատում: Պատմության հետագա զարգացումը, ուր և մենք կտեսնենք արևի և կրակի պաշտամունքի տարրեր, հիմնված է ավանդական հեքիաթային մոտիվների վրա՝ ճանապարհորդություն, սիրելիի որոնումներ, հիվանդ արքայադուստր և այլն: Ահա հեքիաթի հենց այս հատվածներում է, որ մեր հերոսը ակնատես է լինում կրոնների բախմանը:

Ճանապարհորդության ընթացքում Կամար ազ-Չամանը հետևում է մի թռչնի, որ գողացել էր Բուդուրի թանկարժեք քարը, և չնկատելով, որ շատ է հեռացել, հասնում է մի քաղաքի:

Կամար ազ-Չամանը մտավ քաղաք և նրա բնակիչներից ոչ ոք չդիմավորեց նրան և հասավ քաղաքի այգիներին, կանգնեց դրանց դռան մոտ, դուրս եկավ այգեպանը՝ ողջունելով.

-Փա՛ռք Ալլահին, ով քեզ անվնաս պահեց այս քաղաքի բնակիչներից: Արագ մտի՛ր այգի, քանի դեռ քեզ նրանք չեն տեսել:

Այդժամ Կամար ազ-Չամանը մտավ այգի ու հարցրեց այգեպանին.

-Ո՞րն է այս քաղաքի պատմությունը:

-Իմացի՛ր, որ այս քաղաքի բնակիչներն ամբողջությամբ կրակապաշտ են: Պատմի՛ր՝ ինչպես հասար այստեղ և ո՞րն է քո մեր երկիր գալու պատճառը²:³

² ألف ليلة وليلة، الجلد الأول، حكاية الطائر وقرم الزمان، ص. ٦٥٢.

³ «Հազար և մեկ գիշեր»-ից կատարած բոլոր թարգմանությունները հեղինակինն են, - Ն. Ս.:

Սա այն հատվածներից մեկն է, ուր մուսուլմանը հանդիպում է կրակապաշտությունից եկող վտանգին: Քաղաքի բնակչությունն այստեղ մի անդամ զանգված է, որը խորհրդանշում է կրակապաշտությունը՝ որպես իսլամին հակադիր կրոն: Ամենայն հավանականությամբ, սա Իրանի տարածքում գտնվող մի վայր է, ուր իսլամը դեռ չի կարողացել արմատախիլ անել հին հավատամքը: Արդյունքում առաջացած թշնամանքը ծնել է նման պատմություններ:

Այս մեծ հեքիաթի մեջ հաջորդ հետաքրքիր հատվածն արդեն հանդիպում է նրա կազմի մեջ մտնող «Ալ-Ամջադի և ալ-Ասադի պատմություն» հեքիաթում⁴:

Ալ-Ամջադը և ալ-Ասադը Կամար ազ-Չամանի որդիներն են տարբեր մայրերից: Նրանք, դառնալով իրենց մայրերի նենգության զոհը, հայտնվում են օտարության մեջ: Ճանապարհից հոգնած՝ նրանք կանգ են առնում մի քաղաքի մոտ և Ասադը, հոգնած եղբորը թողնելով լեռան վրա հանգստանալու, գնում է քաղաք և ճանապարհին հանդիպում է մի ծեր շեյխի, որն իրականում կրակապաշտ մոզ էր: Վերջինս ալ-Ասադին խաբելով տանում է իր տուն. «Քայլեցին, մինչև որ հասան մի ընդարձակ բակի ու այստեղ կար մի սրահ, ուր քառասուն ծերեր էին նստած, և նրանց մեջտեղը կրակ կար, ծերերը նստած էին նրա շուրջը և երկրպագում ու խոնարհվում էին կրակին»⁵:

Ապա շեյխը, որ ալ-Ասադին բերել էր այստեղ, հրամայում է.

-Իջեցրե՛ք նրան նկուղ և թողեք այնտեղ և թող այսինչ ծառան տանջի նրան օր ու գիշեր: Երբ գա Կրակի տոնը, նրան կտանենք լեռ և կգոհաբերենք կրակին»⁶:

Մինչ այդ ալ-Ամջադը՝ ալ-Ասադի եղբայրը, գնում է քաղաք և պարզում, որ այդ քաղաքը կոչվում է *Մոզերի քաղաք* և որ դրա բնակիչներն ամենակարող Աստծո փոխարեն կրակին են պաշտում:

«ألف ليلة وليلة، الجلد الأول، حكاية الملك الأمجد والملك الأسعد، ص. ٤٧١»

⁵ Նույն տեղում, էջ 482

⁶ Նույն տեղում, էջ 482

Ընդհանուր առմամբ, բոլոր այն հեքիաթներում, ուր հանդիպում է կրակի պաշտամունք, գլխավոր մոզը կոչվում է Բահրամ: Այս հեքիաթը ևս բացառությունն չէ և ալ-Ասադին գերած մոզը Բահրամ մոզն է: Բահրամն իր գոհին տանում է Կրակի լեռ՝ գոհաբերելու համար, սակայն քամին շեղում է նավի ճանապարհը:

Մոզի դուստր ալ-Բուսթանը, որ իջել էր նկուղ ալ-Ասադին տանջելու համար, տեսնելով նրա գեղեցկությունը, ետ է կանգնում նման արարքից և արձակում է նրա կապերը: Ապա սկսում է հետքորքորվել ալ-Ասադի կրոնով: Վերջինս նրան պատմում է Մարգարեի, իսլամի մասին, ցույց է տալիս, որ կրակը արժանի չէ երկրպագության:

Այստեղ տեսնում ենք կրոնափոխ անելու բացահայտ ձգտում: Հակադիր կրոնը, այս դեպքում՝ կրակապաշտությունը, մշտապես ցածր է իսլամից:

Ի վերջո, ն՛ Բուսթանը, ն՛ Բահրամն իսլամ են ընդունում: Այս հեքիաթներում մշտապես հաղթում է իսլամը, որի հակառակորդը կա՛մ կործանվում է, կա՛մ դավանափոխ է լինում:

Ֆանտաստիկ ճանապարհորդության, սիրելիի որոնման և արկածների յուրահատուկ պատմություններ են նաև «Հասան Բասրեցու պատմություն»⁷ և «Մեյֆ ալ-Մուլուքի պատմություն»⁸ հեքիաթները: Երկուսում էլ հանդիպում ենք կրակի պաշտամունքի դրսևորումների:

Արկածները, որ բաժին են ընկնում Մեյֆ ալ-Մուլուքին, ընդհանուր գծերով կրկնում են Սինդբադ-ծովագնացի պատմությունը⁹: Հեքիաթը սկսվում է այսպես.

«Հին ժամանակներում Եգիպտոսում կար Ասիմ իբն Սաֆվան անունով մի թագավոր: Նա առատաձեռն և մեծահոգի, հարզված և արժանի արքա էր: Նա ուներ շատ տարածքներ, դղյակներ, ամրոցներ, զինվորներ և զորքեր: Ինչպես նաև ուներ Ֆարիս իբն Սալիհ անունով մի վեզիր:

⁷ ألف ليلة وليلة، الجلد الثاني، حكاية سلف الملوك وبيدعة الجمال، ص. 1104.

⁸ ألف ليلة وليلة، الجلد الثاني، حكاية حسن الصائغ البصري، ص. 1194.

⁹ ألف ليلة وليلة، الجلد الأول، حكاية سندباد، ص. 818.

Եվ նրանք բոլորը պաշտում էին արևն ու կրակը՝ ամենակարող Աստծո փոխարեն¹⁰»:

Հեքիաթի սկզբից էլ հենց երևում է, որ նրանց՝ կրակը պաշտելու հանգամանքը կենտրոնական տեղ է զբաղեցնում ողջ հեքիաթում: Վայրը, ուր կատարվում են դեպքերը, նշվում է որպես Հին Եգիպտոս: Հնարավոր է, որ պատմողները քաջատեղյակ են եղել եգիպտական դիցարանին, որը ղեկավարվում էր արևի աստծո կողմից:

Հեքիաթի հետագա դեպքերը ցույց են տալիս իսլամի խաղաղ տարածումը և կրակի ու արևի պաշտամունքի արժեզրկումը: Ե՛վ արքան, և՛ նրա վեզիրը, չնայած արդեն պատկառելի տարիքին, զավակներ չունեին: Մի օր, տեսնելով տխուր արքային, վեզիրը պատմում է Սողոմոնի մասին իր լսածները, որոնց համաձայն նրա աստվածը շատ հզոր է: Որոշում են, որ վեզիրը գնա Սողոմոնի մոտ և խնդրի նրան, որ օգնի իրենց: Մինչ վեզիրը մեծ նվերներով կհասներ տեղ, Ալլահը Սողոմոնին արդեն ասել էր, թե ո՛վ և ինչո՛ւ պետք է գա նրա մոտ, և ասել էր, որ Սողոմոնը նրանց դավանափոխ լինելու առաջարկ անի: Սողոմոնն իր վեզիրին ուղարկում է Ֆարիսին դիմավորելու, և վեզիրը հայտնում է, որ իր արքա Սողոմոնը՝ Դավթի որդին, արդեն գիտի նրանց խնդրանքի մասին: Վեզիրը հարցնում է, թե որտեղից Սողոմոնը գիտի այդ մասին և ստանում հետևյալ պատասխանը. «*Ասել է երկնքի և երկրի տերը, ամեն գոյի տիրակալը*»: Վեզիրը հայտնում է, որ իրենք պաշտում են արևին ու կրակին: Իսկ Ֆարիսը պատասխանում է, որ «*արևը մի աստղ է աստղերի մեջ, որ արարել է Ալլահը՝ ամենակարող և ամենարարձր, և հեռու է այն աստված լինելուց, քանզի այն երբեմն հայտնվում է, երբեմն անհետանում¹¹*»: Ինչպես և նախորդ հեքիաթում, այստեղ ևս թագավորն ու վեզիրը իսլամ են ընդունում և ամենակարող աստված նրանց որդի է շնորհում:

Այս հատվածը խորհրդանշում է այլադավանին Ալլահի ճշմարիտ ուղու ցույց տալը մուսուլմանի կողմից: Իսլամը

¹⁰ ألف ليلة وليلة، الجلد الثاني، حكاية سلف الملوك وبديعة الجمال، ص. ١١٥٨.

¹¹ ألف ليلة وليلة، الجلد الثاني، حكاية سلف الملوك وبديعة الجمال، ص. ١١٥٩.

տարածվում է խաղաղ ճանապարհով, քանի որ այն գերակայություն ունի մյուս հավատալիքների նկատմամբ: Այն, ինչին երկրպագում են նրանք, Ալլահի ստեղծածն է, հետևաբար պետք է երկրպագել արարչին, ոչ թե նրա ստեղծածին:

Ինչ վերաբերում է «Հասան Բասրեցու պատմությանը», ապա այստեղ հնդիրանական մոտիվները խառնված են բաղդադյան տարրի հետ: Այն հստակ բաժանված է երկու մասի: Առաջին հատվածում պատմվում է Բասրայից մի երիտասարդի մասին, ում չար կախարդ և կրակապաշտ Բահրամ-մոզ պարսիկը փորձում է կրոնափոխել և օգտագործել իր շահերի համար: Սա ցույց է տալիս դեպի Իրան կատարված արաբական արշավանքները և խալիֆայության հիմնումից հետո Բաղդադում ծավալված պայքարը արաբամետ և իրանամետ ուժերի միջև:

Հեքիաթի երկրորդ հատվածը սիրելիի որոնման ավանդական պատկերն է:

Պարզվում է՝ Հասանը միակը չէր, ով խաբվել էր Բահրամ-մոզի կողմից. նրան նախորդել էին բազմաթիվ երիտասարդ մուսուլմաններ, նա նրանց շարքում լինելու էր հազարերորդը: Մեջբերենք այն հատվածը, ուր Հասանը հասկանում է, թե ինչ դավադրության է գոհ դարձել:

- Հա՛յր, սա ի՞նչ է նշանակում, ու՞ր է աղուհացը, երդումը, որ տվեցիր:

Նայեց [Բահրամ-մոզը-Ն.Ս.] նրա վրա և ասաց.

-Շո՛ւ ն, իմ նմանը գիտի՞ ինչ է աղուհացը: Ես սպանել եմ քո նման բազում երիտասարդների և դու հազարերորդն ես:

Եվ բղավեց [Բահրամ-մոզը-Ն.Ս.] նրա վրա, ու նա լռեց:

Բահրամը ծիծաղեց ու ասաց.

-Երդվում են կրակով ու լույսով, ստվերով ու ջերմությամբ: Ես չէի կարծում, որ դու իմ ցանցը կրնկնես: Սակայն կրակը ինձ ուժ տվեց և օգնեց բռնել քեզ, որ կատարեմ ցանկությունս: Ես կվերադառնամ և կգոհաբերեմ քեզ կրակին, որ այն գոհ լինի ինձանից:

...սպա ասաց.

-Այս կրակը լույսի ու կայծերի տերն է, նրան եմ ես երկրպագում: Եթե դու էլ ինձ նման նրան երկրպագես, քեզ կտամ ունեցվածքիս կեսը և կամուսնացնեմ քեզ աղջկաս հետ:

Հասանը բղավեց և ասաց.

-Գրողը քեզ տանի, դու մոզ և անհավատ ես, կրակին ես պաշտում՝ ամենակարող Աստծու, գիշերվա ու ցերեկվա արարչի փոխարեն:

Այդժամ մոգը բարկացավ և ասաց.

- Մի՞թե դու չես գիշի, արարների՝ շուն, և չե՞ս ընդունի իմ կրոնը¹²:

Հասանը նախընտրում է տանջվել և չի ընդունում կրակապաշտություն: Երկար տանջանքներից հետո նրան հաջողվում է ազատվել ու սպանել մոգին:

Հետաքրքիր են երկու կրոնների ներկայացուցիչների կերպարները:

Մուսուլմանի համար մեծ նշանակություն ունի կիսած հացը, իսկ կրակապաշտի համար սա ոչինչ է: Կրակապաշտության տարածումը, հակառակ իսլամի, կատարվում է ստիպողաբար: Իսլամն ապացուցում է իր ճիշտ լինելը, մինչդեռ կրակապաշտը նյութական արժեք է առաջարկում դավանափոխության համար: Այստեղ նկատվում է նաև արաբների ու պարսիկների միջև ծագած թշնամանքը: Մոգը պարսիկ է, Հասանը՝ արաբ: Այստեղ երևում է արաբական սրի ներքո պարսիկների դավանափոխությունը զրադաշտականությունից դեպի իսլամ: Պատահական չէ, որ այս հեքիաթները հիմնականում ստեղծվել են բաղդադյան շրջանում:

Մեր ուսումնասիրության համար շատ կարևոր է «Աջիբի և Ղարիբի պատմությունը»: Պատմության ողջ պաթոսը մուսուլման ասպետի գովքն է, ով պայքարում է «իրական հավատի» թշնամիների դեմ: Ողջ աշխարհը բաժանվում է լավ մարդկանց՝ մուսուլմանների, և վատերի՝ այլադավանների միջև: Վերջիններիս նկատմամբ հարգանք առաջանում է միայն այն դեպքում, երբ

¹² ألف ليلة وليلة، الجلد الثاني، حكاية حسن الصائغ البصري، ص. ۱۱۹۹.

նրանք իսլամ են ընդունում: Նրանց նկատմամբ ցանկացած դաժանություն արդարացվում է:

Պատմության հերոս Ղարիբը հայտնվում է Արաբիայում, ապա նրան մուսուլման են դարձնում և նա սկսում է պայքարել թշնամի ցեղերի, Իրանի Սասանյան արքաների, Հնդկաստանի թագավորների ու անիրական բազմաթիվ ուժերի դեմ: Հեքիաթի գործողություններն Իրաքից տեղափոխվում են Արաբիա, հետո հերոսը հայտնվում է Միջին Ասիայում, ինչ-որ անհայտ աշխարհներում: Ժամանակագրությունը շատ խառն է:

Ուշ միջնադարյան իսլամին ինքնահաստատման համար անհրաժեշտ էին հնագույն միֆեր: Պատմողները փորձել են անցյալի փաստերը կապել ներկայի հետ և այն ներկայացնել զգացմունքայնորեն՝ գաղափարական և էմոցիոնալ ազդեցության հասնելու համար: Ղարիբը կիսով չափ տոհմի ավագանու ներկայացուցիչ է, կիսով չափ՝ մուսուլման ասպետ: Հերոսը քաջություններ է գործում, կախարդական զենքի է տիրանում, իմաստուն ծերունու խորհրդով ուղղահավատ մուսուլման է դառնում:

Պատմության ողջ ընթացքում Ղարիբը պայքար է մղում անհավատների դեմ: Նրանք կամ կռապաշտ են, կամ կրակապաշտ: Բոլոր դեպքերում հերոսը կատարյալ հաղթանակ է տանում՝ իսլամացնելով կամ ոչնչացնելով հակառակորդին:

Իր պայքարի ճանապարհին Ղարիբը, գուլին հաղթելով, հանդիպում է Իրանի թագավորի դստերը, ում ազատում է գերությունից և հարցնում.

- Ի՞նչն է քեզ դուրս բերել քո ամրոցից ու հասցրել այս անապատն ու ժայռերը, մինչև որ քեզ բռնեցին ավազակները:

Պատասխանեց [Ֆախր Թաջը արքայադուստրը-Ն.Ս.]

- Օ՜ տեր, հայրս, որի թագավորության և թուրքերի թագավորության բնակիչները կրակապաշտ են և պաշտում են կրակին՝ ամենակարող Աստծո փոխարեն, ու մեր երկրում կա մի տաճար, որ կոչվում է Կրակի տաճար և ամեն տարի տոնին հավաքվում են կրակապաշտների դուստրերը և մնում են այստեղ տոնի ընթացքում մեկ ամիս, ապա վերադառնում իրենց երկիր: Եվ ես դուրս

*եկա ու հայրս ինձ հետ ուղարկեց երկու հազար հեծյալ, որ պաշտպանեն ինձ, սակայն մեզ վրա հարձակվեց այս գուլը, սպանեց նրանց մի մասին, մյուսներին էլ գերեց*¹³:

Հեքիաթի շարունակության մեջ մեզ հաճախ են հանդիպում կրակի և արևի պաշտամունքին վերաբերող դրվագներ: Հիմնականում դա երևում է հակառակորդ թագավորի խոսքերից, ով արևով ու կրակով է երդվում: Ահա նման երդման մի օրինակ. «Երդվում եմ արևով՝ լույսի տիրակալով, երդվում եմ գիշերվա խավարով և ցերեկվա լույսով և վագող աստղերով...»¹⁴:

Կրակը, ինչպես տեսնում ենք «Աջիբի և Ղարիբի պատմության» մեջ, մարում է, ինչն էլ լավագույն ապացույցն է, որ այն հեռու է աստված լինելուց: Իսլամ ընդունող արքաներից մեկը կրակի մասին այսպես է արտահայտվում. «Եթե այն աստված լիներ, ապա հավանաբար կպաշտպաներ իրեն անձրևից, որ նրան հանգցրեց: Ես հավատացի նրան, ով ստեղծել է կրակը և լույսը, ստվերն ու ջերմությունը»: Ապա այս նույն արքան կոչ է անում իր ժողովրդին. «Ով մարդի՛կ, մենք տեսանք, որ կրակն էլ Մեծ Ալլահի ստեղծածներից մեկն է: Նա է արարել ամեն ինչ: Երբ ես իմացա այդ, ընդունեցի Ալլահին՝ միակ, տիրող, գիշերվա և ցերեկվա արարչին: Ընդունեք իսլամ և փրկվեք ամենակարողի զայրույթից, իսկ հանդերձյալ կյանքում՝ կրակի տանջանքներից»:

Ընդունելով իսլամ՝ նախկին կրակապաշտը միանգամից սկսում է կրակը որպես պատժի գործիք ներկայացնել, ինչը կրակին բացասական հատկանիշ է տալիս:

Այսպես, երկիր առ երկիր շրջելով՝ մեր հերոս Ղարիբը քարուքանդ է անում կրակի տները¹⁵:

«Աջիբի և Ղարիբի պատմություն»-ն ամբողջապես նվիրված է իսլամի տարածմանը և այն դավանողի փառաբանմանը: Ղարիբը միայնակ չի ներկայացնում իսլամն իր հզորությամբ, նրան մշտապես օգնում են Ալլահի ստեղծած ջինները, գուլերը, հենց ինքը՝

¹³ ألف ليلة وليلة، الجلد الثاني، حكاية عجيب وغريب وسهيم الليل، ص. ٩٥٢.

¹⁴ Նույն տեղում, էջ 952.

¹⁵ Խոսքը զրադաշտականների՝ աթաշխանների մասին է, որ տարածում ունեին և այսօր էլ դեռ կան Իրանում:

Այլահը: Ողջ հեքիաթում արևապաշտ ջիները և կրակապաշտ պարսիկները պարտություն են կրում իսլամի հզոր սրից:

Կրակի և արևի պաշտամունքը հանդիպում է այլ հեքիաթներում ևս, ինչպես օրինակ «Ալա ադ-Դին Աբու-լ-Շամաթի պատմություն»¹⁶-ում:

Կրակը դարեր շարունակ եղել է զրադաշտական Իրանի ամենահարգված երևույթը: Այս հանգամանքն իր ուրույն տեղն է գրավել արաբաիրանական հարաբերություններում և, բնականաբար, իր արտահայտությունն է գտել նաև «Հազար և մեկ գիշեր» հեքիաթներում:

Կրակի պաշտամունքն, ինչպես արդեն նշեցինք, հիմնականում հանդիպում է բաղդադյան շրջանի հեքիաթներում: Եթե անգամ այդ հեքիաթը պատկանում է եգիպտական շրջանին, ապա դրա ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում, որ այն արմատներով բաղդադյան ծագում ունի և միայն վերամշակվել է եգիպտական հողում: Այն հեքիաթները, ուր հանդիպում է կրակի և արևի պաշտամունքը, ծավալով մեծ են: Սա կարելի է բացատրել նրանով, որ պատմողն իր հերոսին այս պաշտամունքի հետ դեմ դիմաց կանգնեցնելու համար պետք է նրան տաներ հեռավոր երկրների ճանապարհորդության ուղիով: Եվ բնական է, որ ճանապարհորդությունների մասին հեքիաթները ծավալով սովորաբար մեծ են լինում: Հաջորդ օրինաչափությունն այն է, որ հիմնականում կրակի պաշտամունքն ի հայտ է գալիս զրադաշտական Իրանի հետ կամ նրա ներկայացուցիչ Բահրամ-մոգի հետ առնչության դեպքում: Բացի Իրանից, կրակի և արևի պաշտամունքն, ինչպես տեսանք վերը նշված մեջբերման մեջ, ներկայացվում է նաև որպես հին եգիպտական հավատալիք: Արաբականացված Եգիպտոսը, ուր ամեն քայլի կարելի է հանդիպել հնագույն հավատամքը հիշեցնող նյութական արժեքների, կարող էր իր ազդեցությունն ունենալ դրանց՝ այս հեքիաթներում արտացոլվելու մեջ: Սակայն հիմնականում այս տարրը հեքիաթներ է ներթափանցել իրանական ազդեցության միջոցով և հանդիսանում է հնագույն զրա-

¹⁶ ألف ليلة وليلة، الجلد الأول، حكاية علاء الدين أبي الشامات، ص. ٤٩٩.

դաշտականության արտացոլքը: Դեպքերը հիմնականում կատարվում են Իրանի տարածքում կամ արաբաիրանյան սահմանի շրջանում գտնվող քաղաքներում՝ Շիրազ, Քուֆա և այլն:

Այս հեքիաթները կարևոր տեղեկություններ են պարունակում արաբաիրանական հարաբերությունների մասին և դավանաբանական տեսակետից ուսումնասիրության կարևոր աղբյուր են:

The Worship of Sun and Fire in the "The Thousand and One Nights" Fairy Tale Collection

*Naira Sahakyan,
MA in Arabic Studies,
Sona Tonikyan, Ph.D.,
YSU, Chair of Arabic Studies.*

The chief aim of this article is the research of elements of fire and sun worship in "The Thousand and One Nights".

The stories with the fire-worship elements illustrate the advantage of Islamic beliefs over other religions.

In the fairy tales, which include fire and sun worship, Islam always wins. Fire-worshippers either accept new religion, i.e. Islam, or are being destroyed.

The elements of fire and sun worship are mostly met in the tales of Baghdad period. Events were happening in the cities of Iran and Iraq, where the influence of fire-worship was still very strong.